



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 7 ՆՈՅԵՄԲԵՐ, 2022

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԾԵ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ ԻՆՃ Իմաստութիւն ԿԲԱՐԻՍ Խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա ԿԻ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 9

#### ԳՈՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԻՐ ԱՐԳԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ամբողջ արքայութիւն գոհութիւն պիտի մատուցանեմ քեզի, Տէր,  
 եւ քու բոլոր սքանչելի գործերդ պիտի թուեմ:  
 Քեզմով պիտի ուրախանամ ու ցնձամ, եւ ներբողեմ քու սուրբ անունդ, ով Բարձրեալ:  
 Թշնամիներս նահանջի ճամբան բռնեցին,  
 քու դիմացդ փապալեցան ու կորուստի մատուցան,  
 որովհետեւ դուն, ով արդար Դատարար, քու գահիդ բազմաձ  
 իմ դատս եւ իրատունքս պաշտպանեցիր:  
 Հեթանոսները յանդիմանեցիր, ամբարիշտը կորուստի մատուցիր,  
 եւ անոնց անունը յաւեր ջնջեցիր:  
 Թշնամին ընդմիշտ խորփակուեցաւ, անոնց քաղաքները հիմնայարակ կործանեցիր,  
 ու անոնց յիշարակն անգամ կորսուեցաւ:  
 Բայց Տէրը կայ ու կը մնայ յաւիտեան:  
 Ան իր աթոռը նստաւ եւ պարտաւ Է դատաստանի:  
 Արդարութեամբ պիտի դատէ աշխարհը, ուղիղ դատաստան պիտի ընէ ժողովուրդներուն:  
 Տէրը ինք ապաւեն պիտի ըլլայ անիրաւուածին,  
 ապաստան պիտի ըլլայ նեղութեան ժամանակներուն:  
 Անոնք որ քեզ կը ճանչնան, ով Տէր, քեզի պիտի վարահին,  
 որովհետեւ դուն չես լքեր անոնք որոնք քեզի կը դիմեն:  
 Ներբող երգեցէք Տիրոջ, որ Միտն կը բնակի, բոլոր ազգերուն մէջ պարմեցէք անոր գործերը.  
 որովհետեւ ան՝ որ բոլոր ոճիռներուն համար հաշիւ կը պահանջէ՝  
 յիշեց փառապողները, չմոռցաւ անոնց աղաղակը:  
 Ողորմէ ինձի, Տէր, քեզ թէ ինչ խեղճ վիճակի մատուցայ թշնամիներուս կողմէ,  
 դուն՝ որ զիս մահուան իշխանութենէն դուրս բերիր,  
 որպէսզի քու գործերուդ օրհներգութիւնը կարարեմ՝  
 Միտն քաղաքին մէջ, քու ժողովուրդիդ դիմաց, եւ պարգեւած փրկութեամբդ ցնձամ:  
 Ազգերը իրենց փորած փոսին մէջ գլորեցան,  
 իրենց ոտքերը իրենց լարած թակարդին մէջ բռնուեցան:  
 Ահա այսպէս Տէրը դատաստան ըրաւ եւ ինքզինք ճանչցուց,  
 ամբարիշտները իրենց իսկ գործերով թակարդի մէջ ձգելով:  
 Դէպի մահ պիտի երթան ամբարիշտները,  
 բոլոր այն ազգերը՝ որոնք զԱստուած կը մոռնան:  
 Բայց Աստուած մինչեւ վերջ պիտի չմոռնայ ջրաւորները,  
 յուսախաբ պիտի չընէ դժբախտները:  
 Ել, ով Տէր, ազգերը քու դատաստանիդ ենթարկէ,  
 մարդը ինքզինք ամենագոր թող չկարծէ:  
 Քու երկիւղդ պարտադրէ անոնց, ով Տէր,  
 թող ազգերը զիման թէ իրենք մարդ են պարզապէս:

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



## ՍԱՂՄՈՍ 9



9րդ Սաղմոսը մաս կը կազմէ գոհաբանական Սաղմոսներու բաժնին, անդրադառնալով անձին կամ ժողովուրդին երախտագիտութիւնը յայրնելու համար Աստուծոյ՝ իր բարութեան, ներումին, փրկութեան եւ անչափ պարգէներուն համար:

Առաջին իսկ բառերը կը յիշեցնեն մեզ Զրիստոսի խօսքը եւ պատուիրաններուն մէջ յիշուածը. «Միտէ քու Տէր Աստուածոյ քու բոլոր սրտովդ, մտքովդ, հոգիովդ եւ գործութեամբդ»: «Զու բոլոր», կամ այլ կնոջ օրինակով, «Իր բոլոր ունեցածը»: Այսօր յաճախ կը խօսինք կամ կը խօսուի մարդոց գործերուն մասին, կամ մարդիկ իրենք իրենց կատարած գործերուն մասին, որքանով սակայն կը խօսինք Աստուծոյ գործերուն մասին: Այսօր իբրեւ հաւաքացեալներ երբ իրարու կը հանդիպինք, ընդհանրապէս որքանով կը խօսինք Աստուծոյ գործերուն մասին, շատ քիչ, որովհետեւ շատ քիչ բան գիպենք այդ գործերուն մասին: Աստուծոյ գործերուն մասին ընդհանրապէս ամենօրեայ մեր կեանքին մէջ կատարուած, կամ այն մասնաւոր գործը, որ կը կոչուի Փրկութիւն, մարդոց փրկութեան համար: Փառաբանանքի մէկ այլ ուրիշ ձեւ մըն ալ այն է, երբ Աստուծով կնուրախանանք ու կը ցնծանք ու կը ներբողենք անոր սուրբ անունը: Այդ փառաբանանքին մէջ ճանչնալու զԱստուած որպէս Բարձրեալը:

3-5 համարներով, Դաւիթ կը փառաբանէ զԱստուած այս անգամ իրեն հանդէպ ցուցաբերած այն յաղթանակը որ փարուեցաւ Դաւիթի թշնամիներուն դէմ: Այսպէս Դաւիթ կանդրադառնայ, որ Աստուած իր կողքին է, այնպէս չէ, որ յաճախ կը կարծենք, որ Աստուած մեր նեղութեան եւ դժուարութեան մէջ մեզ լքած ու մոռցած է: Ահա յստակօրէն Դաւիթ ցոյց կու տայ, որ այդպէս չէ պարագան, որովհետեւ իր դասն ու իրաւունքը պաշտպանեց Աստուած: Նաեւ սա չի նշանակեր որ Աստուած ինչ ալ ըլլան պարագաները մեր կողքին է, ընդհակառակը, այլ մենք Իր կողքին ըլլալու: Այս հաստատումը նաեւ ցոյց կու տայ, որ Աստուած բոլոր ժամանակներուն համար արդարին կողքին է, ոչ միայն Դաւիթին, այլ բոլոր արդարներուն: Այս հաստատումը նաեւ տեսակ մը մարգարէական հաստատում է գալիքը արդէն կատարուածի պէս ներկայացնելու: Յաճախ կը մտածենք, որ մեր նեղութիւններէն մեզ ով պիտի ազատէ, այսօրուան այս չար աշխարհին մէջ արդարները ինչպէս իրենց իրաւունքը պիտի ունենան, ով իրենց իրաւունքը պիտի պաշտպանէ: Ահա այսպէս Դաւիթ արդէն կը ներկայացնէ այնպէս մը, որ ապագան ցոյց կու տայ, անոնց անուն յաւեր ջնջուելով: Դաւիթ նաեւ այս հաստատումին մէջ կը տեսնէ, որ այդ թշնամիները ոչ թէ իր թշնամիներն են, այլ՝ Աստուծոյ: Ինչպէս պիտի ըսէ Զրիստոս. «Ինչ որ ըրիք, ինչ որ ընէք, ինձի ըրած կ'ըլլաք»: Ուրեմն, որքան մեր թշնամիները, խորքին մէջ Աստուծոյ թշնամիներն են:

7-8րդ համարները կը ներկայացնեն նախ Աստուծոյ յաւիտենական ըլլալու հանգամանքը, այն ինչ որ մարդկային պատմութիւնն ալ կու գայ այդ մէկը հաստատելու: Այսօր մարդկային պատմութեան դարերաբեմին վրայ ինչպիսի թագաւորներ, թագաւորութիւններ, կայսրեր, կայսրութիւններ եկած ու անցած են, սակայն անոնցմէ մէկն իսկ գոյութիւն չունի, բայց Աստուած կայ ու կը մնայ: Երկրորդ, Դաւիթ կը ներկայացնէ որ պիտի գայ ու կայ պահը Աստուծոյ դատաստանին, որ տարբեր է մարդկային դատաստանէն, ուր կաշարակերութեամբ, զարտուղի ձեւերով կրնանք ծրել, բայց Աստուծոյ դատաստանի պարագան այդպէս չէ, այլ արդարութեամբ եւ ուղիղ դատաստանով: Այո, որքան Աստուծոյ ողորմութիւնը, նոյնքան եւ Անոր արդարութիւնը: Զոջացող սրտերուն համար Ան պատրաստ է ողորմութեամբ նայելու, իսկ չզոջացող սրտերուն համար արդարութեամբ դատելու:

9-10րդ համարները կը ներկայացնեն, որ Աստուած ոչ միայն պիտի դատէ անարդարը, այլ նաեւ ապաւէն է անիրաւուածին, ապաստան է, ու մանաւանդ անոնց որոնք Տէրը կը ճանչնան, եւ Իրեն կը վստահին, որովհետեւ կը հաւատան որ Աստուած երբեք պիտի չլքէ զանոնք, որոնք Իրեն կը դիմեն, ու Իրեն կը հաւատան: Դաւիթ նաեւ կոչ կ'ուղղէ որ իր նման եւս միւսներն ալ ներբող երգեն Տիրոջ, ու պատմեն Անոր գործերը, որովհետեւ հաշիւ պիտի պահանջէ, յիշելով քառապողները ու լսելով անոնց աղաղակը: Յիշելով, կը նշանակէ, հասած է յարմար ժամանակը: Երբ Աստուած յիշեց Իր խոստումը փրկութեան, որ կը նշանակէ հասաւ ժամանակը փրկութեան:

15-16 համարները կը ներկայացնեն, որ Աստուծոյ դատաստանը ամբարիշտներուն նկատմամբ իրենց իսկ փորած փոսն է, իրենց իսկ պատրաստած թակարդն է: Իսկ 17-18 համարները ցոյց կու տան, որ Աստուած արդար դատաստանը ամբարիշտներուն, եւ բոլոր այն ազգերուն, որոնք զԱստուած կը մոռնան, բայց Աստուած պիտի չմոռնայ չքաւորները եւ երբեք յուսախափ պիտի չընէ դժբախտները: Ի վերջոյ, Դաւիթ կ'ուզէ որ Աստուած դատաստան ընէ, որպէսզի մարդ արարածը իր տեղը իմանայ ուր է, եւ զգուշանայ ինքզինք Աստուծոյ տեղ դնելու:

## **ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ**

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**  
**Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:**  
**Եւ Հիանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:**  
**Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղելոց:**  
**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

**Պահապան ամենայնի Բրիսպոս,**  
*աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի քու՛ եւ ի գիշերի,*  
*ի նստիլ ի քան, ի գնալ ի ճանապարհ,*  
*ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.*  
*եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*